# Դաս 13. Հայ ժողովրդի ծագման ավանդապատումները

Լրացուցիչ նյութ

Հայկը խոցում է Բելին

*Հայկի և Բելի միջև ճակատամարտը տեղի է ունեցել 2492 թ. օգոստոսի 11-ին: Ի պատիվ Հայկի հաղթանակի՝ հայկական Նոր տարին՝ Նավասարդը, համարվել է օգոստոսի 11-ը: Նավասարդը հին հայոց տոմարի առաջին ամիսն էր: Նավասարդի առաջին օրերին կատարվել են բազմամարդ տոնահանդեսներ: Տոնահանդեսներն ուղեկցվել են զոհաբերություններով, փոխադարձ նվիրատվություններով, խրախճանքներով, երաժշտությամբ, պարերով, թատերախաղերով, ռազմախաղերով, զանազան մրցություններով, որսորդական զվարճություններով, գուշակություններով: Նավասարդ տոնի հիմնադիրներից մեկը եղել է Նահապետ Հայկը: Պահպանվել է մի հետաքրքիր պատմություն այդ մասին: Բելը գալիս է Հայկի դեմ կռվի, ժողովուրդը տոնում էր Նավասարդը: Երբ Բելը իր զորքով մոտենում է քաղաքին. նրա ականջին են հասնում երաժշտության ձայներն ու թմբուկների հարվածների արձագանքները:*

*– Սա ի՞նչ բան է, – խիստ զարմացած հարցրեց նա իր մարդկանց:*

*– Այդ հայերը Նոր տարի են տոնում, – պատասխանեցին նրան:*

*«Եթե այս խելագար ժողովուրդը չի վախենում իմ ահավոր զորքից, ուրեմն սրանց հետ չարժե պատերազմել»: Բելը շուռ տվեց ձին ու հեռացավ Հայք երկրից:*

- *Այն բլուրը, որի վրա ճակատամարտի ժամանակ սպանվել է Բելը, Հայկն անվանել է Գերեզման:*
- *Բելի դիակը Հայկը հրամայում է տանել մի բարձր գագաթ և այնտեղ դնել՝ ի տես նրա որդիների և կանանց: Այդ լեռան գագաթը մինչև այժմ կոչվում է Դեպ, այսինքն՝ դիտել: Այդ լեռը կոչվում է նաև Նեմրութ՝ Բելի ասորվածաշնչյան Նեբրովթ անունից:*
- *Պատմագիտության մեջ շրջանառվում է այն տեսակետը, որ Հայկի հիմնադրած թագավորությունն ամենաերկարատևն է մարդկության պատմության մեջ. այն հարատևել է 22 դար անընդմեջ՝ ժառանգաբար փոխանցվելով հորից որդի: Ինքը՝ Հայկը, ապրել է երկար՝ շուրջ 100 տարի:*